

ՀՀ ԱԻ նախարարի 2011 թ. հոկտեմբերի 14-ի թիվ 105-Ն հրամանով ամրագրվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մեդալներ և կրծքանշաններ սահմանելու, դրանց շնորհման կարգը և ձևերը:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի կողմից շնորհվող մեդալներն ու կրծքանշաններն են՝

- 1) «Փառքի խաչ Նոյ» մեդալ.
- 2) «Համագործակցություն հանուն փրկության» մեդալ.
- 3) «Անբասիր ծառայության համար» մեդալ.
- 4) «Լավագույն հրշեջ-փրկարար» մեդալ.
- 5) «Անվեհեր փրկարար» մեդալ.
- 6) «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պատվավոր աշխատակից» մեդալ.
- 7) «Կանխարգելում, Օգնություն, Փրկություն» մեդալ.
- 8) «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության վետերան» մեդալ.
- 9) «Փրկարար միջազգային կարգի», «Փրկարար առաջին կարգի», «Փրկարար երկրորդ կարգի» և «Փրկարար երրորդ կարգի» կրծքանշաններ:

«ՓԱՌՔԻ ԽԱՉ ՆՈՅ» ՄԵԴԱԼ

«Փառքի խաչ Նոյ» մեդալը շնորհվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական և քաղաքացիական ծառայողներին ու տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, ինչպես արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում կատարվող աշխատանքների ընթացքում ցուցաբերած արիության, խիզախության, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական կամ քաղաքացիական պարտքը կատարելու համար՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց:



«ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ» ՄԵՂԱԼ

«Համագործակցություն հանուն փրկության» մեդալը շնորհվում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց՝ արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, ինչպես նաև փրկարարական աշխատանքների ընթացքում ցուցաբերած արիության, խիզախության, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական կամ քաղաքացիական պարտքը կատարելու համար:



«ԱՆՔԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ՄԵՂԱԼ

«Անբասիր ծառայության համար» մեդալն ունի չորս աստիճան և շնորհվում է փրկարարական ծառայողներին՝

- 1) «Անբասիր ծառայության համար» առաջին աստիճանի մեդալը 20 տարվա ծառայության համար.
- 2) «Անբասիր ծառայության համար» երկրորդ աստիճանի մեդալը 15 տարվա ծառայության համար.
- 3) «Անբասիր ծառայության համար» երրորդ աստիճանի մեդալը 10 տարվա ծառայության համար.
- 4) «Անբասիր ծառայության համար» չորրորդ աստիճանի մեդալը 5 տարվա ծառայության համար:



«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀՐՇԵԶ-ՓՐԿԱՐԱՐ» ՄԵՂԱԼ

«Լավագույն հրշեջ-փրկարար» մեդալը շնորհվում է փրկարարական ծառայողներին, ինչպես նաև հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների ընթացքում ցուցաբերած արիության, խիզախության, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական կամ քաղաքացիական պարտքը կատարելու համար Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց:



«ԱՆՎԵՆԵՐ ՓՐԿԱՐԱՐ» ՄԵՂԱԼ

«Անվեհեր փրկարար» մեդալը շնորհվում է փրկարարական ծառայողներին, ինչպես նաև հրդեհաշիջման, փրկարարական և այլ աշխատանքների ընթացքում ցուցաբերած արիության, խիզախության, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական կամ քաղաքացիական պարտքը կատարելու համար Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց:



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՎԱՎՈՐ ԱՇԽԱՏԱԿԻՑ» ՄԵԴԱԼ**

«Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պատվավոր աշխատակից» մեդալը շնորհվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության երկարամյա ստաժ ունեցող, Նախարարության զարգացման գործում մեծ ավանդ ունեցող ծառայողներին, ինչպես նաև աղետների և դրանց հետևանքների կանխարգելման, վերացման աշխատանքների Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա քաղաքացի հանդիսացող կամ քաղաքացիություն չունեցող այն մասնակիցներին, որոնց ջանքերի, գիտահետազոտական ծրագրերի, հայտնագործությունների և անմիջական մասնակցության շնորհիվ կանխվել են կյանքին սպառնացող ռիսկերը, ինչպես նաև մեծամասշտաբ և անդրսահմանային աղետները, ճիշտ ժամանակին և աննախադեպ օգնություն է ցուցաբերվել տուժած բնակչությանը և տարածքներին, ցուցաբերել է համագործակցության և ժամանակին արձագանքելու վառ օրինակ:



«ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, ՕԳՆՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿՈՒԹՅՈՒՆ» ՄԵԴԱԼ

«Կանխարգելում, Օգնություն, Փրկություն» մեդալը շնորհվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական և քաղաքացիական ծառայողներին ու տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում կատարվող աշխատանքների ընթացքում ցուցաբերած արիության, խիզախության, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական կամ քաղաքացիական պարտքը կատարելու համար Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց:



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՎԵՏԵՐԱՆ» ՄԵԴԱԼ**

«Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության վետերան» մեդալը շնորհվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի մարմինների վետերան պետական և քաղաքացիական ծառայողներին ու տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց:



**«ՓՐԿԱՐԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԻ», «ՓՐԿԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ», «ՓՐԿԱՐԱՐ
ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ» ԵՎ «ՓՐԿԱՐԱՐ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ» ԿՐԾՔԱՆՇԱՆՆԵՐ**

Փրկարարներին շնորհվում են՝

- 1) «Փրկարար միջազգային կարգի» կրծքանշան՝ փրկարարական միջազգային կարգ ունենալու համար.
- 2) «Փրկարար առաջին կարգի» կրծքանշան՝ փրկարարական առաջին կարգ ունենալու համար.

3) «Փրկարար երկրորդ կարգի» կրծքանշան՝ փրկարարական երկրորդ կարգ ունենալու համար.

4) «Փրկարար երրորդ կարգի» կրծքանշան՝ փրկարարական երրորդ կարգ ունենալու համար:

